

ISSN 0320-8117



ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆԵՐԻ

ВЕСТНИК
ОБЩЕСТВЕННЫХ
НАУК

HERALD
OF SOCIAL SCIENCES

2

2021

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՎԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE REPUBLIC OF ARMENIA

ԼՐԱԲԵՐ
ՀԱՍՏՐԱԿԱԿԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ВЕСТНИК
ОБЩЕСТВЕННЫХ
НАУК

HERALD
OF SOCIAL SCIENCES

2(662)
ՄԱՅԻՍ-ՕԳՈՍՏՈՒ
ՄԱЙ-АВГУСՏ
MAY-AUGUST

**ՔԱՐԱՎԱՅԻ ՀԱՆԴԵՍ, ԼՈՒՅԻ Է ՏԵՍՆՈՒՄ 1940 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻՑ
ЖУРНАЛ ВЫХОДИТ 3 РАЗА В ГОД, ИЗДАЕТСЯ С НОЯБРЯ 1940 ГОДА
JOURNAL IS PUBLISHED 3 TIMES IN A YEAR, SINCE NOVEMBER 1940**

**Գլխավոր խմբագիր՝ ՊԱՎԵԼ ԱՎԵՏԻՍՅԱՆ
Խմբագրի տեղակալ՝ ԱՐՍԵՆ ԲՈԲՈԽՅԱՆ
Պատասխանատու քարտուղար՝ ԳԱՅԱՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Խմբագրական խորհուրդ

**ԱՐԱՐԱՏ ԱՂԱՍՅԱՆ, ԱՐԾՐՈՒՆ ԱԿԱԳՅԱՆ, ՀԱՄԼԵՏ ԳԵՎՈՐԳՅԱՆ, ՎԱՐԴԱՆ
ԴԵՎՐԻԿՅԱՆ, ԱՐՄԵՐՏ ԽԱՌԱՏՅԱՆ, ՎԻԿՏՈՐ ԿԱՌՎԵՏՅԱՆ, ԱՌԱՄԵԼՅԱՆ, ՎԱԶԵՆԻ ՀԱՅՐԻՆՅԱՆ,
ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, ԳԱԳԻԿ ՂԱՋԻՆՅԱՆ, ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ,
ԳԵՎՈՐԳ ՊՈՂՈՍՅԱՆ, ՈՒՒԲԵՆ ՍԱՖՐԱՏՅԱՆ, ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ**

Главный редактор – ПАВЕЛ АВЕТИСЯН

Заместитель редактора – АРСЕН БОБОХЯН

Ответственный секретарь – ГАЯНЭ АРУТЮНЯН

Редакционная коллегия

**ԱՐՑՐՈՒՆ ԱՎԱԿՅԱՆ, ԱՐԱՐԱՏ ԱՂԱՍՅԱՆ, ՎԼԱԴԻՄԻՐ ԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, ՀԱՄԼԵՏ
ԳԵՎՈՐԿՅԱՆ, ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ, ԳԱԳԻԿ ԿԱԶԻՆՅԱՆ, ՌՈՒԲԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, ՎԻԿՏՈՐ
ԿԱՏՎԱԼՅԱՆ, ԱՇՈՏ ՄԵԼԿՈՆՅԱՆ, ՎԱՉԵ ՕՎԱԿԻՄՅԱՆ, ՆԻԿՈԼԱՅ ՕՂԱՆԵՍՅԱՆ,
ԳԵՎՈՐԿ ՊՈՂՈՍՅԱՆ, ՌՈՒԲԵՆ ՍԱՓՐԱՏՅԱՆ, ՅՈՒՐԻ ՍՈՎԱՐՅԱՆ, ԱЛЬԲԵՐՏ ԽԱՐԱՏՅԱՆ**

Editor-in-chief **PAVEL AVETISYAN**

Vice-editor **ARSEN BOBOKHYAN**

Responsible secretary **GAYANE HARUTYUNYAN**

Editorial Board

**ARARAT AGHASYAN, ARTSRUN AVAGYAN, HAMLET GEVORGIAN, VARDAN DEVRIKYAN,
ALBERT KHARATYAN, VIKTOR KATVALYAN, RUBEN KARAPETYAN, VLADIMIR
HARUTIUNIAN, VACHE HOVAKIMIAN, NIKOLAY HOVANNISIAN, GAGIK GHAZINYAN,
ASHOT MELKONYAN, GEVORG POGHOSYAN, RUBEN SAFRASTYAN, YURI SUVARYAN**

©Հրաբեր հասարակական գիտությունների

©Вестник общественных наук

©Herald of Social Sciences

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Գայանե Մախմուրյան – Նախիջևանի գավառը Մոսկվայի պայմանագրի և 1920-1921 թթ. ռուս-թուրք-ադրբեջանական հարաբերությունների համատեքստում.....	9
Ռուբեն Սահակյան – Արևելքի ժողովուրդների առաջին համագումարը (սղագրական հաշվետվություն. Հայաստանը և Հայկական հարցը).....	37
Խաչիկ Հարությունյան – Երևանցի խոջա Գրիգոր Մոծակենցը և Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի N 6231 Հայսմավուրքը...	67
Երվանդ Մարգարյան, Վլադիմիր Ռուժանսկի – «Հայկականություն-հուդայականություն». Իրեաների և հայերի պատմության համեմատական վերլուծություն պետական շինարարության համատեքստում.....	99

ՍՈՑԻՈԼՈԳԻԱ

Սոնա Մելիքջանյան – <<-ում կանանց աշխատանքային միգրացիայի հարցի շուրջ.....	107
--	------------

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Յուրի Սուվարյան – Հանրային կառավարման քաղաքակրթական ու քաղաքագիտական կազմակերպման հիմնախնդիրները.....	118
Վոլոդյա Մանասյան – << գյուղատնտեսական արտադրության գոտիական մասնագիտացման շրջանացման մեթոդաբանությունը.....	140
Դավիթ Հարությունյան, Կարեն Եղիազարյան – Նորարարությունների դերը բրենդի կառավարման գործընթացում << բանկային համակարգում.....	158

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ

Ամայա Հարությունյան – Իրավագիտակցության ժամանակակից պատկերացումները և բնութագրական հատկանիշները.....	175
---	------------

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Արմեն Գրիգորյան (ՌԴ, Մոսկվա) – Միտք և զգացմունք, ինչ ենք խոսում դրանց մասին.....	185
---	------------

Դավիթ Գյուրջինյան – Բալթիական լեզուների հայերեն անունների տարբերակայնության մասին.....	217
Լիլիթ Սաֆրաստյան – Գարնան ավետարերը. հայ հերոսի կերպարը Ահմադ Շամլուի «Վարդան» պոեմում.....	240

ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԱՐՎԵՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Աննա Ասատրյան – Երաժշտագիտության հարցերը «Լրաբերի» էջերում. ակադեմիական չուխաճյանագիտության ձևավորումն ու զարգացումը..	251
---	-----

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Աստղիկ Խորայելյան – Հայ կանանց զարդերի գործառույթները (XVIII-XX դդ.).....	266
Կարեն Հովհաննիայան – U. Դավիթ անունը կրող սրբավայրերը պատմական Հայաստանի տարածքում.....	291
Ռուզաննա Շատուրյան, Ռոման Հովսեփյան – «Ժենգյալով հացը» 2020 թ. Արցախյան պատերազմի օրերին.....	305
Արմինե Գաբրիելյան – Արցախի Տիգրանակերտի անտիկ թասերի ձևա- կազմական-տիպաբանական քննություն.....	327
Աստղիկ Բաբաջանյան – Նորահայտ ուշմիջնադարյան Եկեղեցի թեղուառում (2010 թ. պեղումների արդյունքները).....	343

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աննա Ասատրյան – Պետրոս Աղամյանը Ժամանակակիցների հուշերում (կազմողներ՝ Ռ. Զարյան, Ա. Բեքարյան).....	358
Վանիկ Վիրաբյան – Խաչատուր Ռոստոմի Ստեփանյան, 1921 թ. փետրվարյան հակաբուշկիկյան ապստամբությունը Հայաստանում.....	365

ԳԻՏԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

Ալվինա Արամյան – Ավետիք Խահակյանը՝ բասկերի երգի թարգմանիչ.	369
---	-----

ԽՈՍՔ ՀԻՇԱՏԱԿԻ

Գրիգոր Ասատրյան. հումանիստ-փիլիսոփան, պետական ազնիվ ու նվիրյալ գործիչը.....	373
Վարդան Պետրոսյան – Բազմաշնորհ լեզվաբանը և հմուտ հայերենագետը.....	383

СОДЕРЖАНИЕ

ИСТОРИЯ И ПОЛИТОЛОГИЯ

Гаянэ Махмурян – Нахичеванская область в контексте Московского договора и русско–турецко–азербайджанских отношений 1920–1921 гг.	9
Рубен Саакян – Первый съезд народов Востока (стенографический отчёт: Армения и Армянский вопрос).....	37
Хачик Арутюнян – Григор Ходжа Моцакенц из Еревана и Айсмавурк № 6231 из Матенадарана им. Месропа Маштоца.....	67
Еrvанд Маргарян, Владимир Ружанский – Арmeno-Иудаика: сравнительный анализ истории евреев и армян в контексте государственного строительства.....	99

СОЦИОЛОГИЯ

Сона Меликджянян – К вопросу о женской трудовой миграции в РА.....	107
---	-----

ЭКОНОМИКА

Юрий Суварян – Проблемы цивилизационной и политологической организации общественного управления.....	118
Володя Манасян – Методология районирования поясной специализации сельскохозяйственного производства РА.....	140
Давид Арутюнян, Карен Егиазарян – Роль инноваций в процессе управления брендом в банковской системе РА.....	158

ФИЛОСОФИЯ И ПРАВО

Амалия Арутюнян – Современные представления и характерные особенности правосознания.....	175
---	-----

ФИЛОЛОГИЯ

Армен Григорян (РФ, Москва) – Мысль и чувство, как мы о них говорим.....	185
Давид Гюргинян – О вариантности армянских названий балтийских языков.....	217
Лилит Сафрастян – Провозвестник весны: образ героя-армянина в поэме Ахмада Шамлу «Вардан».....	240

КУЛЬТУРА И ИСКУССТВОВЕДЕНИЕ

- Анна Асатрян** – Вопросы музыковедения на страницах журнала «Вестник»: формирование и развитие академического чухаджяноведения..... 251

АРХЕОЛОГИЯ И ЭТНОГРАФИЯ

- Астхик Исраелян** – Функции украшений армянских женщин (XVIII-XX вв.)..... 266
- Карен Оганнисян** – Святынища *Св. Давида* на территории исторической Армении..... 291
- Рузанна Цатурян, Роман Овсепян** – «Женгялов хац» в дни Арцахской войны 2020 года..... 305
- Армине Габриелян** – Морфолого-типологический анализ мисок из арцахского Тигранакерта..... 327
- Астхик Бабаджанян** – Нововыявленная позднесредневековая церковь в Техуте (результаты раскопок 2010 г.)..... 343

РЕЦЕНЗИИ

- Анна Асатрян** – Петрос Адамян в воспоминаниях современников (составители Р. Зарян, А. Бекарян)..... 358
- Ваник Вирабян** – Хачатур Ростомович Степанян, Февральское 1921 г. антибольшевистское восстание в Армении..... 365

НАУЧНАЯ ХРОНИКА

- Альвина Арамян** – Аветик Исаакян - переводчик песни басков..... 369

СЛОВО ПАМЯТИ

- Григор Асатрян**: философ-гуманист, правдивый и преданный государственный деятель 373
- Вардан Петросян** – Многогранный лингвист и опытный арmenист..... 383

CONTENT

HISTORY AND POLITICAL SCIENCE

Gayane Makhmourian – Nakhijevan Region in the Context of the Treaty of Moscow and of the Russian–Turkish–Azerbaijanian Relations in 1920-1921....	9
Ruben Sahakyan – The First Congress of the Peoples of the East (Stenographic Report: Armenia and the Armenian Question).....	37
Khachik Harutyunyan – Grigor Khoja Motsakentc of Yerevan and N 6231 Haysmavurk' of Matenadaran of Mesrop Mashtots.....	67
Ervand Margaryan, Vladimir Ruzhansky – Armeno-Judaica : the Comparative Analysis of the History of the Jews and the Armenians in the Context of State Building.....	99

SOCIOLOGY

Sona Melikjanyan – On the Question of Female Labour Migration in RA.....	107
---	-----

ECONOMICS

Yuri Suvaryan – Civilization and Political Problems of the Organization of Public Administration.....	118
Volodya Manasyan – The Concept of Agricultural Division into Districts with Definition of Zone Specialization of Agricultural Production RA.....	140
David Harutyunyan, Karen Eghiazaryan – The Role of Innovations in Brand Management Process in the Banking System of RA.....	158

PHILOSOPHY AND LAW

Amalya Harutyunyan – Modern Notions and Characteristic Features of Legal Consciousness.....	175
--	-----

PHILOLOGY

Armen Grigoryan (RF, Moscow) – Thought and Feeling as we Talk about them.....	185
Davit Gyurjinyan – Towards the Variants of the Armenian Names of the Baltic Languages.....	217
Lilit Safrastyan – The Herald of Spring. Image of Armenian Hero in the Poem of Ahmad Shamlu "Vartan".....	240

CULTURE AND ART HISTORY

Anna Asatryan – Issues of Musicology on the Pages of the "Herald": Formation and Development of Academic Tchouhadjian Studies.....	251
---	-----

ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

Astghik Israelian – The Functions of Armenian Female Adornments (XVIII-XX cc.)	266
Karen Hovhannisyan – Sanctuaries Baring the Name of St. David on the Territory of Historical Armenia.....	291
Ruzanna Tsaturyan, Roman Hovsepyan – "Jengyalov Hats" in the 2020 Artsakh Wartime.....	305
Armine Gabrielyan – Morphological and Typological Analysis of the Bowls from Tlgranakert of Artsakh.....	327
Astghik Babajanyan – The Newfound Chapel of the Late Medieval Period in Teghut (The Results of the Excavations in 2010).....	343

LITERARY REVIEWS

Anna Asatryan – Petros Adamyan in the Memories of Contemporaries (compiled by R. Zaryan, A. Bekaryan).....	358
Vanik Viarbyan – Khachatur Rostom Stepanyan, The Anti-Bolshevik Revolt in Armenia in February of 1921.....	365

SCIENTIFIC CHRONICLE

Alvina Aramyan – Avetik Isahakyan - Translator of the Basque Song.....	369
---	-----

A WORD OF MEMORY

Grigor Asatryan. Humanist-Philosopher, Honest and Devoted Statesman.....	373
Vardan Petrosyan – The Talented Linguist and Skilled Armenologist.....	383

ԱՐՑԱԽԻ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ԱՆՏԻԿ ԹԱՍԵՐԻ ԶԵՎԱԿԱԶՄԱԿԱՆ-ՏԻՊԱԲԱՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Արմինե Գաբրիելյան

Պատմական գիտությունների թեկնածու

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ

ՀՀ, Երևան, Չարենցի 15

Էլ. հասցե՝ arminegabriel.iae@gmail.com

Հոդվածը ներկայացվել է 14.03.2021, գրախոսվել է 18.03.2021,

ընդունվել է տպագրության 28.06.2021

DOI: 10.53548/03208117-2021.2-327

Ներածություն

Տիգրանակերտի մ.թ.ա. I - մ.թ. III դարերով թվագրվող անտիկ խեցեղենն աչքի է ընկնում ձևակազմական և գործառությային բազմազանությամբ, որի մեջ ուրույն տեղ են զբաղեցնում իբրև սպասք օգտագործվող անոթները։ Սույն հոդվածը նվիրված է անտիկ խեցեղենի սպասքի ամենահաճախ հանդիպող մի տեսակին՝ թասերին, որոնք ամբողջական և բեկորային նմուշներով հայտնաբերվում են Տիգրանակերտի Ամրացված և քաղաքային թաղամասերի անտիկ շերտերից։

Տիգրանակերտյան թասերը հարթ նստուկով, հատակից դեպի վեր լայնացող կողերով բաց անոթներ են, որոնք, բազմաքանակությամբ հանդերձ, ներկայանում են ձևակազմական կայունությամբ՝ հիմնականում տարբերվելով պսակի ձևով։ Ըստ պսակի ձևի՝ դրանք կարելի է բաժանել չորս տիպի, ըստ ընդհանուր ձևակազմության՝ ևս երկու տիպի՝

1. Դուրս ձգված շուրթով
2. Ներս հակված շուրթով
3. Սուր շրթերիզով
4. Հարթ կտրած շուրթով
5. Հարակից
6. Ծորակավոր

1. Դուրս ձգված շուրթով թասեր

Այս տիպի հարթ նստուկով թասերի՝ դուրս ձգված, փոքր-ինչ թմբիկավոր շուրթերը միանում են անոթի կողին կամ ուղիղ կամ մատնաշափ ներճկումով, սահուն կամ սուր եզրով՝ առաջացնելով մի քանի տարբերակ

(բարձրությունը՝ 6-10 սմ, շուրջի տրամագիծը՝ 13-18 սմ, հատակինը՝ 5-9 սմ): Դրանք միմյանցից տարբերվում են հիմնականում պսակի ներճկվածության աստիճանով (աղ. 1):

Թասերը մեծավ մասամբ պատրաստված են որակյալ և լավ հունցած կավից, արագ պտտվող դուրգի վրա, հավասարաչափ են թրծված, սակայն երբեմն թրծումն ուժեղ և տևական կրակով չի իրականացվել, որի հետևանքով խեցու կտրվածքում թուխ միջնաշերտ է առաջացել: Թասերն արտաքուատ և ներքուստ պատված են դեղնադարչնագույնից կարմրավարդագույն շիղթով և մանրակրկիտ փայլեցված են: Շուրջերը հարդարված են բաց հիմնաներկի վրա կարմիրի տարբեր երանգների շեղ գծիկներով: Դրանց մի մասի ներքին մակերեսը երբեմն զարդարված է նույն ներկով արված մի քանի զուգահեռ, համակենտրոն շրջանագծերով (աղ. 3/4, 5), որոնք խիստ նախընտրելի են տիգրանակերտյան ինչպես թասերի, այնպես էլ գավաթների և ըմպանակների ներքին մակերեսի հարդարանքում: Երկու և ավելի համակենտրոն գունազարդ գծերը զարդարում են վերոնշյալ բաց անոթների հատակամերձ, երբեմն էլ իրանի վերին հատվածները: Տվյալ զարդագուտին թասերի հարդարանքում հանդիպում է նաև բազմագույն կատարմամբ (աղ. 3/1-3): Ընդ որում, այս խմբի թասերն առատորեն հայտնաբերվում են Անտիկ քաղաքային թաղամասի ուշ հելլենիստական և ուշ անտիկ շերտերի ողջ հզորությունից (0,50-0,60 մ), որը խոսում է դրանց տեղական, զանգվածային արտադրության մասին: Դրանց լավագույն օրինակներն են **S 12, Աթ/13, 37, 52, 56, 61, 74, 87, 104, 113, 128; S 13, Աթ/12, 27, 33, 41, 45** (աղ. 1/10, 14, 16, 17, 19, աղ. 3/1, 5):


Տիգրանակերտյան՝ դեպի դուրս ձգված շուրջեղով թասերի ձևակագմական և գեղարվեստական հարդարանքով նույնական օրինակներ հայտնի են հոլիզարձանից մոտ 40 կմ արևելք գտնվող ներկայիս Աղրբեցանի Աղօաբեղի շրջանի (պատմական Ուտիք) Գարակոբար բնակավայրից և Կարա-Շեկե բնակավայրի II շինարարական հորիզոնի նյութերից¹:

2. Ներս հակված շուրջեղով թասեր


Հարթ նստուկով, դրանցից աստիճանաբար լայնացող կողերով այս տիպի թասերը տարբերվում են շուրջի ձևով՝ ներկայացնելով մի քանի տարբերակ (աղ. 2):

¹ Османов 2006, 76-77, табл. 24/7-9, Исимизаде 1965, 216, рис.18/1, 3, 4.


Աղյուսակ 1




Աղյուսակ 2



Աղյուսակ 3



Աղյուսակ 4



2.1. Կլորավուն շուրթով, երբեմն թույլ, երբեմն ավելի խորը ներս հակված շուրթով թասերն ամենահաճախ հանդիպող տարրերակն են (բարձրությունը՝ 6,5-10 սմ, շուրթի տրամագիծը՝ 12-20 սմ, նստուկինը՝ 7-11 սմ):

Նախորդ տիպի նման սրանք ևս պատրաստված են մանրահատ, լավ հունցած կավից, ունեն բաց կարմրավարդագույն կամ օխրայի գույն, ընտիր փայլեցրած են և գունազարդված: Զարդարումը հիմնականում արված է շուրթերին, համաչափ կրկնվող կարմիր կամ մուգ դարչնագույն շեղ գծիկների տեսքով (աղ. 2/3, 5, 6, 9, 11, 12, 13, 15): Սակայն հանդիպում են նաև ներսից 1-3 զուգահեռ համակենտրոն գոտիներով հարդարված օրինակներ (աղ. 2/1, 7): Հոծ ներկած համակենտրոն գծերը կարծես տիգրանակերտյան վարպետների սիրելի և նախընտրելի զարդամոտիվը լինեն և ինչ-որ չափով նույնիսկ բրենդային՝ տվյալ ժամանակաշրջանի խեցեզործության համար:

Այս թասերից հայտնաբերվել են Հայաստանի և Արցախի վերը նշված անտիկ դամբարանային հուշարձաններից, իսկ տիգրանակերտյան թասերի նույնական օրինակները՝ Գարակոբարի դամբարանադաշտից², կարծես հուշելով դրանց պարտադիր լինելը թաղումներում:

Պեղումների ժամանակ գտնվել են նաև այս թասերի հորիզոնական ամրացված օղակածն կանթերով օրինակներ՝ պատրաստված թրծումից բաց և մոխրավուն գույն ստացած կավերից (S12, Աթ/40, S14, Աթ/51, աղ. 2/20):

2.2. Դեպի ներս հակված՝ թեք կտրած շուրթով թասերի ներսում շուրթը ծևավորված է մի քանի նուրբ ակոսագծերից կազմված գոտիով (աղ. 2/18, 19): Այս օրինակները ներկայանում են ինչպես կարմրավարդագույն, այնպես էլ սևափայլ խեցի ունեցող տարրերակներով (բարձրությունը՝ 6-9 սմ, շուրթի տրամագիծը՝ 13-14 սմ, նստուկինը՝ 10-12 սմ):

2.3. Դեպի ներս հակված՝ սուր շրթերիզով սևափայլ թասերը ևս ունեն հարթ նստուկ, քիչ կլորավուն իրան, որը, պսակի հիմքում ընդգծված անցում առաջացնելով, շեշտակի բեկվում է ներս (բարձրությունը՝ 6-8 սմ, շուրթի տրամագիծը՝ 15-18 սմ, նստուկինը՝ 10-12 սմ): Դրանք, որպես կանոն, պատրաստված են լավ հունցած, մանրահատ կավից, ունեն հավասարաչափ թրծում, լավ փայլեցված և կամ մոխրագույն խեցի (աղ. 2/16, 17, 22-

² Османов 2006, 77, табл. 24/6.

24), ավելի հազվադեպ՝ բաց դեղնավարդագոյն մակերես և գունազարդ պսակ (աղ. 2/2): Զուգահեռները հանդիպում են Վանի խեցեղեն նյութերում³:

Տիգրանակերտից հայտնաբերված՝ դեպի դուրս և դեպի ներս հակված շուրթերով ու պսակների տարբեր լուծումներով, ներսություն օղակաձև, գունազարդ գոտիներով զարդարված թասերի ամենամոտ զուգահեռները թերևս գտնում ենք Կուրի աջափնյակում տեղակայված Շոռ-Թեփե, Գալա-Թեփե և Գարաքոբար բնակավայրերի և դամբարանադաշտերի նյութերում: Ընդ որում, տիգրանակերտյան շքեղ դեկորատիվ հարդարանք կրող գունազարդ ծորակավոր սափորներն ու կաթսայատիպ անոթները ևս նույնական են Գալա-Թեփեի և Գարաքոբար հուշարձանի միևնույն տեսակի խեցեղենի հետ⁴, որը կարող է խոսել անտիկ ժամանակաշրջանում այս բնակավայրերի միջև սերտ առևտրատնտեսական և մշակութային կապերի մասին: Չենք բացառում նաև, որ խեցեղենի այդ տեսակները Տիգրանակերտի արտադրանք են եղել:

3. Սուր շուրթով, խորը ներճկված պսակով թասեր

Թեկուզ բեկորային, բայց հնարավոր է եղել առանձնացնել նաև սուր շուրթերիզով, խորը ներճկումով անոթի իրանին միացող կողով թասերը, որոնք ձևավորվել են ուրարտական ժամանակաշրջանում, յուրացվել և ժառանգվել են վաղ հայկական-աքեմենյան խեցեգործության կողմից և փոխանցվել են հելլենիստականին: Այս թասերից են առաջացել փիալարմանակները⁵:

4. Հարթ կտրած շուրթով թասեր

Հարթ նստուկով, հորիզոնական կտրված շուրթով թասերը (բարձրությունը՝ 5-10 սմ, շուրթի տրամագիծը՝ 15-18 սմ, նստուկինը՝ 6-9 սմ, աղ. 2/21) հիմնականում պատրաստված են լավ հունցած, համասեռ կավից: Բացի մի քանի օրինակներից, որոնց միջուկը գորշավուն է արագ և ոչ տևական կրակով թրծելու հետևանքով, մնացածներն ունեն հավասար թրծում, միագույն խեցի: Թասերից մեկի մակերեսը կարմրավուն է և լավ փայլեցված, իսկ շուրթը հարդարված է կարմիր ներկով արված շեղ գծիկ-

³ Matiasvili 2000, 159-175, Abb.16

⁴ Алиев, Бабаев, Гусейнова 2011, 179-185, Алиев, Бабаев, Гусейнова, Алиева, Аббасов, Алиев 2012, 226-234.

⁵ Тирацян 1968, 19, рис. 1а, Կարապետյան 2003, 39, աղ. 25/2-6:

ներով (Տիգր. 2015, ՀսԴ/10): Հարթ կտրած շուրջով, ներքուստ ճառագայթաձև գունազարդված թասեր առատորեն հայտնաբերվել են Արմավիրից: Ի. Կարապետյանը դրանք համարում է ուրարտական խեցենից սերած և թվագրվում են մ.թ.ա. V-III դարերով⁶: Շուրջի նման լուծումով թասեր գտնվել են նաև Արտաշատի մ.թ.ա. II-I դարերով թվագրվող շերտերից: Ժ. Խաչատրյանը, չբացառելով այդօրինակ թասերի կապը ուրարտական և փոյուգական խեցեղեն ծևերի հետ, ակնհայտ նմանություններ է տեսնում դրանց և սկահակների միջև⁷:

Թասերի վերոնշյալ տիպերն ու տարբերակներն առատ զուգահեռներ ունեն Հայաստանի անտիկ դարաշրջանի այլ հուշարձանների խեցենից մեջ⁸: Հիմնականում օգտագործվելով իբրև սպասք՝ երբեմն դրանք կիրառվել են նաև իբրև կափարիչներ: Պեղածո նյութում կափարիչների խիստ սահմանափակ քանակը հուշում է, որ կերակրի պատրաստման համար օգտագործված կավե անոթները ծածկվել են բաց ամաններով՝ թասերով և քրեղաններով: Սրա օգտին է խոսում նաև այն հանգամանքը, որ արտաքին կողմում կրակի ակնհայտ հետքեր ունեցող թասերի մի մասի ներքին մակերեսը, առանձնապես հատակի մասում, խիստ քայլայված է, որը կարող էր գոլորշու երկարատև ազդեցության հետևանք լինել⁹:

Թասերի օգտագործումը որպես խոփեր հաստատվում է Բենիամինի անտիկ դամբարանադաշտում թաղման կարասների բերանները ծածկող, հակառակ դիրքով դրված թասերի կամ քրեղանների առկայությամբ: Նոյն կիրառական նշանակությունն են ունեցել նաև նոյն դամբարանադաշտի հիմնահողային և սալարկղային թաղումներին ուղեկցող միջին և փոքր պուլիկները ծածկող թասերն ու ափսեները¹⁰: Օգտագործման այս երևոյթը փաստագրվել է նաև Մինգեչառի կարասային թաղումների պեղումների ժամանակ, որտեղ գրեթե բոլոր մեծ ծորակավոր անոթները ծածկված են եղել թասերով¹¹: Բերված օրինակները փաստում են կեն-

⁶ Կարապետյան 1971, 276-280:

⁷ Խաչատրյան 1981, 102:

⁸ Արակելյան 1969, տաճ. I/1, 2, տաճ. III/1, բն. 12/2, Խաչատրյան, Կանեցյան 1974, տախ. I/4, 6, տախ. II/24, Կարպետյան 1979, աղ. I/8, 9, Տիրացյան 1988, 118, բն. 25/6, 7, 8, 10, 12, Քոչարյան 1991, տախ. XIV/1-4, XIX/2-4, 6, XXI/8, Դեմիրխանյան 2010, տաճ. 48, 51, 52, 53, 54, 55, 75, 76, 79:

⁹ Խաչատրյան 2002, 104:

¹⁰ Եգանյան 2010, 105:

¹¹ Կազիև 1960, 21.

ցաղում բաց ամանները՝ որպես խուսի օգտագործելու բավական հաստատուն սովորույթը, որը ինքնաբերաբար արտահայտվել է նաև տվյալ ժամանակաշրջանի թաղման ծեսում: Այս սովորույթի արմատները տեսնում ենք ուրարտական թաղման ծեսում¹²:

5. Հարակից թասեր

Իր տեսակի մեջ առայժմ բացառիկ է 2017 թ. **հարակից թասերով անոթի** հայտնաբերումը, որն առաջին անգամ է հանդիպում Տիգրանակերտում (Տիգր. 2017, ՀսՊ 27 աղ. 4/2): Այն երեք թասերի միացումից կազմված գունազարդ անոթ է: Թասերն ունեն հարթ կտրած, դեպի դուրս և ներս ծգված, փոքր-ինչ թմբիկավոր, 14 սմ տրամագծով շուրջեր: Ընդ որում՝ թասերն առանձին-առանձին պատրաստվել են դուրգի վրա, այնուհետև միմյանց միացվել, որից հետո դրսից միևնույն կավի մածուցիկ շերտով պատվել, հարթեցվել և փայլեցվել են: Անոթի կոտրվածքում հստակ երևում է կանոնավոր պատրաստված թասերից մեկի պրոֆիլը և դրա վրա դրված միևնույն կավի խորդուբորդ, անհարթ շերտը: Թասերի միացման հատվածում հարակից անոթի կենտրոնում, ամենայն հավանականությամբ բռնակ է եղել, որը, ցավոք, չի պահպանվել: Երևում է միայն դրա եռանկյունաձև հիմքը: Հարակից թասերով անոթը պատրաստված է լավորակ, մանրահատ, համասեռ կավից, ունի կարմրավարդագույն խեցի և հավասարաչափ թրծում: Թասերի շուրջերը և ներքին մակերեսը գունազարդված են բաց կարմրավարդագույն ներկով անկանոն տարված գծերի միջոցով:

Երկուսից երեք անոթների միացությամբ անոթները հինարևելյան ծագում ունեն և հայտնի են դեռևս վաղ երկաթեդարյան ժամանակաշրջանի, ուրարտական և հետուրարտական շրջանի հուշարձաններից¹³: Հարակից թասերի գյուտերը համեմատաբար քիչ են: Երկու թասերի միացությամբ անոթներ պատմական Հայաստանի տարածքից հայտնաբերվել են հգդիրի մոտ գտնվող ուրարտական դամբարանադաշտից (Կոլլումբարիից), Կերենի թիվ 64 դամբարանից և Արտաշատի արևելյան դամբարանադաշտից¹⁴: Դրանք, ինչպես նաև պատահական գտնված այլ հարակից թասերը, իրենց գուգահեռներն ունեն Անդրկովկասում (Մինգեշաուր) և իրանական, սիրիական ու միջերկրածովյան նյութերում (Կար-

¹² Կոֆտին 1944, 8, 69, բաց. 5, 7, 9, Կարապետյան, Ենգիբարյան 2002, 218:

¹³ Պիոտրովսկի 1950, 35, Mellink 1968, 559-573, Կարապետյան 2003, 38:

¹⁴ Կոֆտին 1944, 20, բաց. 17, Գնունի 2014, 155, Խաչատրյան 1981, 120, նկ. 5:

քեմիշ, Մարլիկ, Հասանլու, Սիալկ Բ, Ամլաշ)¹⁵: Ընդ որում՝ հարակից թասերը լինում են ինչպես հարթ նստուկներով (Կերեն, Դինկա Շենիե), այնպես էլ ոտքերի վրա (Հասանլու): Ցավոք, տիգրանակերտյան եզակի օրինակի ստորին հատվածը չի պահպանվել, և մենք չենք կարող ասել, թե հարակից թասերի վերոնշյալ որ խմբին է այն հարում: Ընդհանուր ձևակազմական հատկանիշներով մեր օրինակն ավելի մոտ է Հասանլուից հայտնաբերվածին: Սակայն փոխառելով անոթների ձևակազմությունը՝ տիգրանակերտյան վարպետներն ուրույն մոտեցում են ցուցաբերել թասերի գունազարդման մեջ՝ հավատարիմ մնալով անոթների ձևավորման արդեն մշակված, տեղական, տիգրանակերտյան ոճին:

6. Ծորակավոր թաս-քրեղաններ

Այս անոթների լավագույն ամբողջական օրինակը հայտնաբերվել է Անտիկ քաղաքային առաջին թաղամասի 2014 թ. պեղումների ժամանակ (Տիգր. 2014, Աթ/61, աղ. 4/1): Անոթի հարթ նստուկից դեպի վեր լայնացող իրանը ներճկված կողով միանում է դուրս հակված թմբիկավոր շուրթին (քարձրությունը՝ 11,5 սմ, շուրթի տրամագիծը՝ 27,5 սմ, հատակի տրամագիծը՝ 12,5 սմ): Փոքր-ինչ վեր ծգված, կարճ, խողովակածն ծորակը տեղադրված է շուրթից 2,5 սմ ցած: Ծորակի հակադիր կողմում՝ անմիջապես շրթեզրին, ամրացված է հորիզոնական կանթը: Ծորակավոր թասը պատրաստված է կարմրավարդագույն, լավ հոնցած, մանրահատ, միասեռ խիտ կավից և ունի հավասարաչափ թրծում: Անոթը լավ կոկված, փայլեցված և պատված է վարդագույն շփոթով, շուրթը և բոնակը զարդարված են վառ կարմիրով արված միմյանց հաջորդող, համաչափ կրկնվող շեղ գծիկներով:

Ծորակավոր թաս-քրեղանները հայտնի են ինչպես Հայաստանի անտիկ դարաշրջանի հուշարձաններից՝ Արմավիրից, Դվինից, Երվանդաշատից, Շամիրամից, Բենիամինից, Կարճաղբյուրից¹⁶, այնպես էլ հարևան Երկրների բնակավայրային հուշարձաններից՝ Կարա-Շենիեց, Միդասի քաղաքից, Մինգեչառուի կարասային թաղումներից¹⁷:

¹⁵ Սիմոնյան, Սանամյան, Գնունի 2007, 32, իր 52-53:

¹⁶ Տիրացյան 1974, 175, Կարապետյան 1979, 268-278, աղ. II/4, Օհանյան 1989, 213, աղ. IV/2, 16, Քոչարյան 1991, աղ. XX/4, Կարապետյան 2003, աղ. 25/7, Եգանյան 2010, 60, տախտ. X/6, XI/1, Պարսամյան 2015, 98, 109:

¹⁷ Կարապետյան 2003, 40, Կազиև 1960, տապ. XXVIII/9.

ԸստԱ.Դեմիրխանյանի՝ այս անոթները կիրառվել են իբրև կաթնամաններ¹⁸: Նման կարծիք է արտահայտել նաև Յանիս Չերետակիսը՝ ներկայացնելով Աթենքի ազորայից և Կերամեյկոս թաղամասից, Կիպրոսից և Մակեդոնիայից հայտնաբերված հելլենիստական ժամանակաշրջանի ծորակավոր անոթները¹⁹: Հաշվի առնելով այն, որ դրանք գտնվում են նաև սրբավայրերից (ի մասնավորի Մակեդոնիայի օրինակը), որոշ հետազոտողներ չեն բացառում ծորակավոր անոթների ծիսական նշանակությունը²⁰:

Եղրակացություններ

Ամփոփելով կարող ենք ասել, որ Արցախի Տիգրանակերտի մեծաքանակ անտիկ խեցերենի մեջ ուրուն տեղ են գրադացնում իբրև սպասք օգտագործվող թասերը: Դրանք հարթ նստուկով, հատակից դեպի վեր լայնացող կողերով բաց անոթներ են, որոնք, բազմաքանակությամբ հանդերձ, ներկայանում են ծևակազմական կայունությամբ՝ հիմնականում տարրերվելով պսակի ձևով: Իբրև սպասք կիրառվող թասերն ունեն հավասարաչափ թրծում, լավ կոկված, փայլեցված և, որպես կանոն, գունազարդ մակերես, թեև ավելի հազվադեպ հանդիպում են նաև սևափայլ կամ գորշավուն, փայլեցված մակերեսով օրինակներ:

Տիգրանակերտից հայտնաբերված սպասքի այս տեսակի ծևակազմական հատկանիշների և դեկորատիվ հարդարանքի քննությունը լրացուցիչ փաստարկներ ընձեռեցին հաստատելու, որ մ.թ.ա. I - մ.թ. III դարերում այս տեղ ապրել են քաղաքային կենցաղ վարող բնակիչներ, որոնք ունեցել են աշխույժ առևտրական և մշակութային հարաբերություններ թե՛ Հայաստանի և հարևան երկրների անտիկ քաղաքների, թե՛ իրանական կենտրոնների հետ:

Գրականություն

Գնունի Ա. 2014, Կերենը քաղաքակրթությունների խաչմերուկում մ.թ.ա. հագարամյակի երկրորդ քառորդում, «Հայագիտության հարցեր», գլխ. խմբ.՝ Ա. Սիմոնյան, թ. 2, Երևան, ԵՊՀ հրատ., էջ 149-167:

¹⁸ Демирханян 2010, 22.

¹⁹ Chairetakis 2018, 6.

²⁰ Chairetakis 2018, 6.

Եգանյան Լ. 2010, Շիրակի անտիկ դամբարանադաշտերը, Շիրակի հնագիտական և պատմապատճենագույն ուսումնասիրություններ, N 1, Երևան-Գյումրի, «Գիտություն», 224 էջ:

Խաչատրյան Ժ. 1981, Արտաշատ II, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 200 էջ+XXXII աղ. Խաչատրյան Ժ., Կանեցյան Ա. 1974, Արտաշատի VIII բլրի շերտագրությունը, Լրաբեր հասարակական գիտությունների N 9, Երևան, էջ 76-91:

Խաչատրյան Հ. 2002, Անտիկ շրջանի խոհանոցային խեցեղենի գործառական որոշ խնդիրների շուրջ, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», Գյումրի, հ. V, էջ 104:

Կարապետյան Ի. 1971, Մ.թ.ա. VI-III դարերի վաղ հայկական թասերի մի խոմբ, Պատմաբանասիրական հանդես, N 3, Երևան, էջ 276-280:

Կարապետյան Ի. 1979, Կարճադրյուրի պեղումները 1975-78 թթ., Պատմաբանասիրական հանդես, N 3, Երևան, էջ 276-280:

Կարապետյան Ի. 2003, Հայաստանի նյութական մշակույթը մ.թ.ա. VI-IV դդ., հ. 19, Երևան, «Գիտություն», 110 էջ+55 աղ.:

Կարապետյան Ի., Ենգիբարյան Ն. 2002, Քրմի կնիքով թաղում Արգիշտիխինի նիլիից, Բանքեր Երևանի Համալսարանի, N 2 (107), Երևան, էջ 218-225:

Պարսամյան Ա. 2015, Երվանդաշատի խեցեղենը ըստ 2007 թ. պեղումների նյութերի, «Անտառ ծննդոց» հոդվածների ժողովածու, խմբագրական կազմ՝ Է. Մինասյան, Հ. Պետրոսյան և այլք, Երևան, ԵՊՀ հրատ., էջ 91-116:

Սիմոնյան Հ., Սանամյան Հ., Գնունի Ա. 2007, Արցախի և ազատագրված տարածքների 1990-2005 թթ. հնագիտական հետազոտությունների հիմնական արդյունքները, ցուցահանդեսի ցանկ, Երևան, «Հուշարձան», 44 էջ:

Տիրացյան Գ. 1974, Արմավիրի 1973 թ. պեղումների նյութերից, նախնական հաղորդում, Պատմաբանասիրական հանդես, N 3, Երևան, էջ 175:

Քոչարյան Գ. 1991, Դվինը Անտիկ դարաշրջանում, Հնագիտական պեղումները Հայաստանում, հ. 22, Երևան, ՀԳԱ հրատ., 114 էջ+XXIX աղյուսակ:

Օհանյան Հ. 1989, Շամիրամի անտիկ ժամանակաշրջանի բնակավայրի խեցեղենը (1981-1987 թթ. պեղումներ), Բանքեր Երևանի Համալսարանի, N 2, Երևան, էջ 208-221:

Алиев Т., Бабаев Ф., Гусейнова Т. 2011, Об исследованиях на городище Галатепе, Археологические исследования в Азербайджане, 2010, ИАЭ НАН А, Баку, с. 179-185 (на азер. языке, резюме на рус.).

Алиев Т., Бабаев Ф., Гусейнова Т., Алиева Г., Аббасов В., Алиев В. 2012, Исследования в античном албанском городище и некрополе Галатепе, Археологические исследования в Азербайджане, 2011, ИАЭ НАН А, Баку, с. 226-234 (на азер. языке, резюме на рус.).

- Аракелян Б. 1969, Результаты изучения древнего Армавира, Историко-филологический журнал АН Армянской ССР, N 4, с. 157-174.
- Демирханян А. 2010, Северо-восток Еревана (II в. до н.э – I в. н.э), Ереван, «Гитутюн», 140 с.
- Исмизаде О. 1965, Раскопки холма Кара-Тепе в Мильской степи (1954-1958 гг.), Материалы и исследования по археологии СССР, N 125, Москва-Ленинград, «Наука», с. 195-228.
- Казиев С. 1960, Археологические раскопки Мингечаура. Альбом кувшинных погребений, Баку, изд. АН Азер. ССР, 27 с.+44 таблицы.
- Куфтин Б. 1944, Урартский «колумбарий» у подошвы Араката и Куро-Аракский энеолит, Вестник Гос. музея Грузии, Тбилиси, т. XIII-B, с. 1-172.
- Османов Ф. 2006, История и культура Кавказской Албании, IV в. до н.э. – III в. н.э. (на основании археологических материалов), Баку, «Тахсил», 210 с.
- Пиотровский Б. 1950, Кармир Блур I, Результаты раскопок 1939-1949, Археологические раскопки в Армении, АН Арм. ССР, N 1, Ереван, 40 с.+16 таблиц.
- Тирацян Г. 1968, Урарту и Армения: к вопросу преемственности материальной культуры, Вестник общественных наук Ереван, N 2, с. 17-30.
- Тирацян Г. 1988, Культура древней Армении, VI в до н.э.-III н.э., Ереван, АН Арм. ССР, 204 с.
- Chairetakis Y. 2018, Notes on a Hellenistic Milk Pail, Journal of Hellenistic Pottery and Material Culture, Archaeopress, Berlin, vol. 3, p. 3-8.
- Matiasvili N. 2000, Die kultische Architektur in der Kolchis in hellenistischer Zeit, Archaeologische Mittelungen aus Iran und Turan 2000, Bd. 32, S. 159-175.
- Mellink M. 1968, Archaeology in Asia Minor, American Journal of Archaeology, vol. 72, no. 2, p. 125-147.

ԱՐՑԱԽԻ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ԱՆՏԻԿ ԹԱՍԵՐԻ ԶԵՎԱԿԱԶՄԱԿԱՆ-ՏԻՊԱԲԱՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Արմինե Գաբրիելյան

Ամփոփում

Տիգրանակերտի մ.թ.ա. I - մ.թ. III դարերով թվագրվող անտիկ խեցեղենն աչքի է ընկնում ձևակազմական և գործառութային բազմազանությամբ, որի մեջ ուրույն տեղ են զբաղեցնում իբրև սպասք օգտագործվող անոթները: Անտիկ խեցեղենի սպասքի ամենահաճախ հանդիպող մի տեսակ՝ թասերը,

ամբողջական և բեկորային նմուշներով հայտնաբերվում են Տիգրանակերտի Ամրացված և քաղաքային թաղամասերի անտիկ շերտերից: Դրանք հարթ նստուկով, հատակից դեպի վեր լայնացող կողերով բաց անոթներ են, որոնք, բազմաքանակությամբ հանդերձ, ներկայանում են ծևակազմական կայունությամբ՝ հիմնականում տարբերվելով պսակի ձևով: Տիգրանակերտից հայտնաբերված թասերի ծևակազմական հատկանիշների և դեկորատիվ հարդարանքի քննությունը լրացուցիչ փաստարկներ ընձեռեցին հաստատելու, որ անտիկ շրջանում այստեղ ապրել են քաղաքային կենցաղ Վարող բնակիչներ, որոնք ունեցել են աշխույժ առևտրական և մշակութային հարաբերություններ թե՛ Հայաստանի և հարևան Երկրների անտիկ քաղաքների, թե՛ իրանական կենտրոնների հետ:

Բանալի բառեր՝ Արցախի Տիգրանակերտ, Ուտիք, Կուրի աջափնյակ, անտիկ խեցեղեն, սպասք, թասեր, ծորակավոր անոթ:

МОРФОЛОГО-ТИПОЛОГИЧЕСКИЙ АНАЛИЗ МИСОК ИЗ АРЦАХСКОГО ТИГРАНАКЕРТА

Арmine Габриелян

Резюме

Античная керамика из Тигранакерта, датируемая I в. до н.э. – III в. н.э., отличается многообразием форм и функциональностью. В ней особое место занимает столовая посуда. Наиболее часто встречающейся ее разновидностью являются миски, которые были найдены как в цитадели, так и в жилых кварталах античного Тигранакерта. Эта посуда открытого типа имеет плоское днище с расширяющимися кверху стенками. Представленные большим количеством миски Тигранакерта имеют морфологическое постоянство, меняется лишь один элемент – форма венчика. Тщательный анализ морфологических особенностей и художественного оформления мисок позволяет заключить, что население Тигранакерта I в. до н.э. – III в. н.э. было представлено городскими жителями, которые поддерживали активные торговые и культурные отношения как с другими античными городами Армении и соседних областей, так и с иранскими центрами.

Ключевые слова – Арцахский Тигранакерт, Утик, правобережье Куры, античная керамика, столовая посуда, миски, сосуд со сливом.

MORPHOLOGICAL AND TYPOLOGICAL ANALYSIS OF THE BOWLS FROM TIGRANAKERT OF ARTSAKH

Armine Gabrielyan

Abstract

The ceramics of the Classical period revealed from Tigranakert of Artsakh dating back to the I century BC – III century AD is presented in this article in wide morphological and functional variability. In the ceramic complex of Tigranakert there is a separate group of pottery that was used as tableware. In this paper we revise one of the most common types of this cookware – the bowls. The bowls were discovered within the layers of the Classical period both in the citadel area, and in the living quarters. This kind of ware has flat bottom and widening upwards body. The bowls of Tigranakert presented by a rich collection are morphologically similar and slightly differ only in their rim shapes. According to the studies of morphological peculiarities and aesthetic treatment of the bowls revealed from Tigranakert of Artsakh, we can venture a hypothesis that in the I century BC – III century AD its population was presented by urban-dwellers who had cultural relations and led an active trade not only with other cities of Armenia and neighboring countries of the Greco-Roman world, but also with Iranian centers.

Key words – Tigranakert of Artsakh, Utik, the right bank of the Kura river, pottery of the Classical period, tableware, bowls, spouted vessel.

**Հայերեն նյութերի բաժնի խմբագիրներ՝ Մելանիա Միքայելյան
Սեդա Կուպելյան
Ռուսերեն նյութերի բաժնի խմբագիր՝ Գայանե Հարությունյան**

Редакторы армянского отдела – **Меланья Микаелян
Седа Купелян**
Редактор русского отдела – **Гаянэ Арутюнян**

Editors of Armenian part **Melania Mikaelyan
Seda Kupelyan**
Editor of Russian part **Gayane Harutyunyan**

**Համակարգչային ծևավորումը և էջադրումը՝ Արմինե Պետրոսյանի
Компьютерный дизайн и пагинация – Армине Петросян
Computer design and pagination Armine Petrosyan**

Հրատ. պատվեր N 1101
Ստորագրված է տպագրության 22.06.2021 թ.
Տպագրական 24.25 մամուլ: Տպաքանակը՝ 200
ՀՀ ԳԱԱ տպարան, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24
Խմբագրության հասցեն՝ 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24 գ
Հեռ.՝ 581902:

Подписано к печати 22.06.2021 г.
24.25 печ. л. Тираж – 200. Типография НАН РА
Ереван, пр. Маршала Баграмяна 24
Адрес редакции: 0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24г
Тел. 581902

Signed for printing 22.06.2021
24.25 print. sheets. Printed copies – 200. NAS RA Press
Yerevan, Marshal Baghramyan av. 24
Editorial office address: 0019, Yerevan, Marshal Baghramyan av. 24c
Tel. 581902

**Հանդեսի պաշտոնական կայքը՝ <http://lraber.sci.am>
Հանդեսի էլեկտրոնային հասցեն՝ lraber@sci.am
Օфициальный сайт журнала: <http://lraber.sci.am>
Электронная почта журнала: lraber@sci.am
Official site of the Journal: <http://lraber.sci.am>
E-mail of the Journal: lraber@sci.am**

Nº 2, 2021

HERALD ■ LUPFER ■ BECHUKK

HERALD ■ LUPFER ■ BECHUKK